

ԶԱՐԻՆԵ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԱՌԱԶՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի
կրտսեր գիտաշխատող
Երևանի պետական համալսարան
zsarajyan@mail.ru*

ORCID ID:0009-0005-4103-2492

DOI: 10.54503/978-5-8080-1568-5-195

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ ԱՐՑԱԽԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ. ՄԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԻ ԱՎԱՆԴԸ

*Բանալի բառեր՝ Արցախ, Մերգեյ Սարինյան, գրականություն,
հայկական, պոեզիա, գրականագիտություն, ավանդ:*

Ներածություն

Բնավ չփորձելով Արցախի գրականությունը տարանջատել հայ գրականությունից՝ պետք է փաստել, որ այն ունեցել է զարգացման յուրահատուկ ընթացք: Լինելով հայ գրականության անբաժանելի մասը՝ իր զարգացման մեջ արտահայտել է այնպիսի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են եղել տարածաշրջանի պատմաքաղաքական իրադարձություններով՝ հարստանալով ժամանակին և տարածքին հատուկ խնդիրներով ու պատմությամբ: Արցախի գրականությունը վերջին մեկդարյա զարգացման ընթացքում կրել է նախ ադրբեջանական բռնաճնշումների, ապա ազգային վերազարթոնքի, ազգային-ազատագրական պայքարի, պատերազմների, քաղաքական փոփոխությունների անմիջական ազդեցությունները: Ժանրերի, թեմաների, կերպարների, հերոսների, գաղափարա-

կան և դիպաշարային զարգացումների խճանկարում շեշտադրած լինելով *ազգային ինքնություն, Մայր Հայաստան, հայրենիք* հասկացությունները՝ Արցախի գրողները, մինչ անկախության շրջանը, անհիմա մեղադրանքներով բռնաճնշումների էին ենթարկվում, երբեմն ձերբակալվում ադրբեջանական իշխանությունների կողմից: Այդպիսի դժվարին պայմաններում անգամ չլռեց Արցախի գրողների ծայնը:

Գրեթե մի ամբողջ դար կանգնած լինելով գրական այս և հետագա գործընթացների վերլուծության ու գնահատության ակունքներում՝ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանն իսկապես առանձնահատուկ դեր է ունեցել Արցախի գրականության ուսումնասիրության, համակարգման, մեկնաբանման և ուղղորդման գործում: Նա իր բազմամյա գիտական գործունեությամբ նշանակալի ազդեցություն է թողել Արցախի գրականության ձևավորման և զարգացման վրա:

Ջաթթոնքի և ինքնության որոնումների շրջան

Իր «Բնաշխարհի բնաստեղծը» հոդվածում Սերգեյ Սարինյանն անդրադառնում է 1948 թ. նացիոնալիզմի մեղադրանքով ադրբեջանական իշխանությունների կողմից սիբիրյան աքսորի դատապարտված Բոգդան Ջանյանին, նրա ստեղծագործական աշխարհին, գործունեությանը, ազերական լծի տակ իր գոյությունը հազիվ պահող Արցախի գրական միավորմանը, որի ղեկավարը հենց Բոգդան Ջանյանն էր:

Գնահատելով Բոգդան Ջանյանի (1917, Տումի – 2010, Երևան) ավանդը Արցախի գրական ընտանիքի կազմավորման գործում՝ Սարինյանը գրում է. «Առանձնահատուկ եղավ Բոգդան Ջանյանի երևույթը գրական Արցախի կազմավորման գործում և, ըստ ամենայնի, հիշողության արժանի: Նա որոշ իմաստով հիմնադիր էր և պատմական դրամատիկ անցումների ուղեկից: Այն, ինչ անվանում ենք Ղարաբաղյան գրականու-

յուն, իր ձևավորման շրջանում կոչվում էր պրոլետգրողների մարզային ասոցիացիա, որը, սակայն, իրականում ավելի վերացական հասկացություն էր, քան գրական կազմակերպություն: Ճակատագրի բերումով ասոցիացիային գրեթե միայնակ իմաստ և բովանդակություն էր տալիս Գրիգոր Ներսիսյանը, ըստ ամենայնի կրթված մի անհատականություն, որը հայտնվել էր հայրենի եզերքում՝ նպաստելու նրա գրական-լուսավորական առաջընթացին... Եվ Ներսիսյանը զոհ է դառնում 37-ի բռնությանն ու ազերական խարդավանքին: Այդ մի որոշ ժամանակ Դարաբաղյան գրականությանը ուղղություն էր տալիս «Ներքին աքսորյալ» Թաթուլ Հուրյանը, մինչև որ 1941-ին ստեղծվում է գրողների մարզային բաժանմունք, և առաջին քարտուղար է նշանակվում Բոգդան Ջանյանը»¹:

1954-ին Ջանյանը վերադառնում է սիբիրյան աքսորից, իսկ այդ ընթացքում արցախյան գրական կյանքում, որպես դրական տեղաշարժ, Սերգեյ Սարիսյանն առանձնացնում է ասպարեզի վրա գտնվող գրողների, որոնք նոր խոսք, նոր շունչ են հաղորդում ինքնավար մարզի գրական-մշակութային կյանքին՝ ընթացք տալով ազգային ինքնագիտակցության զարթոնքին: Որպես ազգային կյանքի ու հայոց մշակութային ավանդույթի նորոգությանը ձեռնամուխ հեղինակներ՝ Սարիսյանը մատնանշում է Բագրատ Ուլուբաբյանին, Գուրգեն Գաբրիելյանին, Վազգեն Օվյանին, Հրաչյա Բեգլարյանին և այլոց²:

Ինքնորոշման ու ազգային ազատագրական ձգտումների գուգահեռ՝ ահագնանում էր ազերական բռնաճնշումը, և գրողները երբեմն հարկադրված են լինում հեռանալ Արցախից: Այդ ճակատագրին է արժանանում նաև Բոգդան Ջանյանը:

¹ **Սարիսյան Ս.**, *Հայոց գրականության երկու դարը*, գիրք հինգերորդ, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատ., 2009, էջ 201:

² Նույն տեղում, էջ 206:

Սարինյանը, համեմատելով Ջանյանի առաջին ժողովածուն՝ «Իմ լուսաբացը» (1948 թ.) և վերջինը՝ «Ես մերոնց մոտ եմ» (2007 թ.), նկատում է. «Մի գրավիչ ընդհանրություն կա ժողովածուները միացնող ժամանակների ու տարածության մեջ, նախապես տրված մի մոտիվ, որ անձնական ու անանձնական զգացողությունները ներհյուսում է ավստոսանքի նոստալգիկ բաղձանքով»³:

«Իմ Ղարաբաղ» բանաստեղծությունը «Իմ հող, իմ տուն» ժողովածուի հիմնական ասելիքն է դառնում, որտեղ հեղինակն իրեն նույնացնում է հայրենիքի հետ և ասելիքը բանաձևում մե'կ բնապատկերների միջոցով, մե'կ՝ մայր-զավակ փոխկապակցվածության հուզազգացական շերտերով.

Ապրում ենք քեզ հետ այս լեռների մեջ՝ / Անհայտ ու անտես աշխարհներին մեծ,

Թեև մեծ չես, բայց մե'կ ես ինձ համար, / Մայրենի հող ես, մա'յր ես ինձ համար,

Իսկ մայրերի մեջ / Փոքր ու մեծ չկա...

Ես քո ծնունդն եմ, քո հողից ելած / Ես այն կաղնին եմ քո հողմահաված,

Որին արմատից մինչև տերևը / Քո շունչն է սնում, քո խորունկ սերը...

Հող ես ու մայր ես, այո', ինձ համար, / Բայց մայր ես նաև

Իմ սրտում եղած այն ամեն ինչի, / Որ երգով պիտի խոսի ու հնչի

Եվ շնչի ազատ, լիաթոք, անվերջ/ Իմ որոնածի ու գտածի մեջ⁴:

Սարինյանը նրան բնութագրում է որպես բնաշխարհի բանաստեղծ, որի «հայտնությունն իր հետ էր, բնաշխարհի իր տիե-

³ Նույն տեղում:

⁴ **Ջանյան Բ.,** *Ես մենակ չեմ*, Երևան, «Հայպետհրատ» հրատ., 1964, էջ 38:
~ 198 ~

գերքում, որը եղավ նրա Իթաքեն»⁵: Նրա պոեզիայում անընդ-
հատ արձագանքում է Արցախը՝ Տրտու գետով, մաշտոցյան
Ամարասով, անտիկ Շուշով և այլ խորհրդանիշներով, որոնք
գրողի կարոտների ու սիրո մշտական հասցեները եղան բա-
նաստեղծական տարբեր ժողովածուներում:

Իր «Անդրադարձ»⁶ վերնագրով հոդվածում Սարինյանը
բանաստեղծ Մովսես Յախշունցին Օշականի բնորոշմամբ ան-
վանում է «իրավ բանաստեղծ»՝ ոչ թե «ինքնուսի բանահյուսա-
կան հանգով, այլ հասկացության դասական իմաստով»:

Հետադարձ հայացքով քննելով Յախշունցի ստեղծագոր-
ծության պոետիկան՝ Սարինյանն ընդգծում է տաղաչափության
արվեստին նրա խորագիտակ լինելու հանգամանքը, իսկ ստեղ-
ծագործական աշխարհի համապատկերում՝ հայրենի եզերքի
կանչը, մանկության արահետների կարոտը և վերադարձի
աղերսը դեպի Բերդաձոր: Յախշունցի պոեզիայում հայրենի
բնաշխարհի գեղարվեստական պատկերներին անդրադառնա-
լով՝ քննադատն առանձնացնում է նրա ինքնատիպ բնապատ-
կերները, որոնք եզակի զգացողությամբ են բնորոշվում. «Յախ-
շունցը բնագրով է զգում հայրենի բնության շնչառությունը»:
Ապա նա Բերդաձորը զուգորդում է Արցախի հետ՝ մեկնաբանե-
լով այսպես. «Բերդաձորը սոսկ ծննդավայր չէ: Դա Արցախն է,
հայրենիքը, աշխարհը, տիեզերքը, հոգու փիլիսոփայական
հանգրվանը: Եվ այս ամենը գոյի ու անգոյի իրենց խորհուրդ-
ներն են բեկում Բերդաձորում, անցնում բանաստեղծի հոգու մի-
ջով և հյուսում քնարական մենախոսություններ, որոնց մեղմու-
թյան մեջ մի գրավիչ հմայք կա և միացնող մտերմություն»⁷:

Հայրենաբաղձության և հայրենի եզերքի ռոմանտիկական
նկարագրությունը գրականության մեջ հետագայում վերաճեց

⁵ Սարինյան Ս., *Հայոց գրականության երկու դարը*, գիրք հինգերորդ, էջ 201:

⁶ Նույն տեղում, էջ 214:

⁷ Նույն տեղում:

ոգու արթնացման, ազատության ու անկախության թեմատիկայի, ելևէջների՝ վերադառնալով ազգային կենսագրության արմատներին:

Վերադարձ ազգային ակունքներին

1960-ական թթ. Արցախի գրական ընտանիքում նկատելի ակտիվություն էր սկսվել թե՛ գրող-գրադատների թվի, թե՛ ստեղծագործական թեմատիկայի ընդլայնման առումով՝ շեշտադրելով ազգայինը, Հայաստանի հետ միավորվելու ձգտումը և աղբյուրական լծից ազատվելու ներքին խմորումները: Սա, բնականաբար, դուրս էր Բաքվի իշխանությունների հակահայ քաղաքականության շրջաժիրից, ինչի հետևանքով նոր թափ են ստանում բռնաճնշումները:

Այս շրջանում Բագրատ Ուլուբաբյանի (Աղբյուրականի գրողների միության Լեոնային Ղարաբաղի բաժանմունքի պատասխանատու քարտուղար 1949 թ.-ից) ջանքերով Ղարաբաղ են հրավիրվում հայոց գրականության գրեթե բոլոր նշանավոր դեմքերը՝ Նաիրի Զարյան, Հրաչյա Քոչար, Պարույր Սևակ, Սիլվա Կապուտիկյան և ուրիշներ: 1967-ի հոկտեմբերին ԼՂ մարզկոմում որոշվում է Բ. Ուլուբաբյանի հարցը, և նրան հեռացնում են զբաղեցրած պաշտոնից⁸:

Այսպիսի ծանր պայմաններում էր գոյությունը շարունակում Արցախի գրականությունը՝ երկրամասը՝ ժողովրդին պահելով հայեցի, հաղթահարելով Մայր Հայաստանի հետ հոգևոր, մշակութային հաղորդակցության դժվարությունները, որոնք բիրտ ուժով ստեղծում էին աղբյուրական իշխանությունները:

Այս ժամանակաշրջանի գրական գործընթացների գնահատումներում Սերգեյ Սարինյանը նշում է. «Խորհրդային Միության կուսակցական ու պետական կառուցվածքի ազատա-

⁸ Բեգլարյան Հր., *Արցախ-Նախ*, գիրք չորրորդ, Ստեփանակերտ, «Լաչագան Բարեպաշտ» հրատ., 2005, էջ 110-111:

կանացումը ազդարար եղավ ազգային ոգու արթնացման, և երկրամասը բռնկվեց ազատագրական պայքարի գաղափարով: Ասպարեզ եկավ 60-ականների սերունդը՝ հեղափոխություն նշանավորելով Արցախի մտավոր կյանքում՝ գրականության ու հրապարակախոսության գաղափարն ուղղելով երկրամասի պատմության, մշակույթի, էթնիկական ավանդույթների վերածնությանը: Տասնամյակներ շարունակ Արցախի բանաստեղծությունը ներկայակաժ էր մարզային տարածքի գաղութային կապանքներում՝ օտարված իր պատմության ու ազգային ոգու հիմունքներից: Ղարաբաղը պատկերվում էր դրսից, քան բացահայտվում ներսից, և ղարաբաղյան մոտիվը գերազանցապես հնչում էր որպես էկզոտիկա, հայրենի եզերքի ռոմանտիկական նոստալգիա»⁹:

1983 թ. ԼՂ գրողների պահանջով բաժանմունքի պատասխանատու քարտուղար է ընտրվում բանաստեղծ, հրապարակախոս Վարդան Հակոբյանը, որը, ինչպես փաստում է բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանը, «գրական օջախում իր գործունեությունը սկսեց այնտեղից, ուր հասել էր Բ. Ուլուբաբյանը: Մինչև Արցախյան շարժման բացարձակ բողոքի ցույցերը Վարդան Հակոբյանի աշխատանքային գործունեությունն ընթանում էր թուրք գրողների և կուսակցական գործիչների հետ գաղափարական խիստ բախումներով: Ի վերջո, նրան հաջողվում է, Մոսկվայի ճնշման տակ, Բաքվում Ղարաբաղի գրողների գործերը տպագրելու բաժին ունենալ և այդ բաժինն էլ ձգել-բերել Ստեփանակերտ»¹⁰: Ըստ էության՝ սա մարզի առաջին կազմակերպությունն էր, որ դուրս եկավ Ադրբեջանի կազմից և ձեռք բերեց նկատելի ինքնուրույնություն:

⁹ **Գրիգորյան Ա.**, *Գեղագիտությունը և բանաստեղծությունը Սադիկյանի հետ*, Մտեփանակերտ, «Դպրատուն» հրատ., 2018, էջ 120:

¹⁰ **Բեգլարյան Հր.**, *Արցախ-Նամե*, գիրք չորրորդ, էջ 111:

Օբյեկտիվորեն գնահատելով այս և մյուս՝ շոշափելիորեն կարևոր նշանակության քայլերը ինչպես գրական ընտանիքի կազմակերպական, այնպես էլ ստեղծագործական որոնումների ճանապարհին՝ Սարինյանն առանձնացնում է գրող, հրապարակախոս, Արցախյան շարժման առաջամարտիկ Վարդան Հակոբյանի մեծ դերը՝ նկատելով. «Վարդան Հակոբյանի երևույթը անխզելիորեն կապված է պատմական այն իրադարձությունների հետ, որ տեղի ունեցան Արցախում անցյալ դարավերջի տասնամյակներին: Հեղափոխական վերելքի մթնոլորտում կազմավորվեց Վարդան Հակոբյանի գրական անհատականությունը: Նրան վիճակվեց կատարելու ավելին, քան իր գրչակիցներից որևէ մեկին: Նա որակափոխեց արցախյան պոեզիայի ձևն ու բովանդակությունը, նրա աշխարհայացքը, ժանրային կազմն ու փիլիսոփայական տեսահորիզոնը»¹¹:

Անկախության շրջան

1988-ին թափ առած Արցախյան շարժումը վերաճեց ազգային-ազատագրական պատերազմի, որի արդյունքում Արցախը ազատագրվեց ադրբեջանական կապանքներից և հռչակվեց անկախ պետություն: Պատմաքաղաքական այս իրադարձությունների անմիջական մասնակիցը եղան Արցախի գրողները, որոնցից յուրաքանչյուրը յուրովի դարձավ այդ իրադարձությունների գեղարվեստական տարեգիրը: Գրականության տեսադաշտում հայտնվեցին նոր թեմաներ, սյուժեներ, կերպարներ, գրականության հերոս դարձավ հանուն հայրենիքի մարտադաշտ իջած անձնավեր հայ զինվորը, մարտիկը, դժվարություններին դիմակայող, բայց ազատ, անկախ հայրենիքում ապրել գերադասող, պայքարող մարդը, փառաբանվեցին հաղթանակն ու հաղթած զինվորը: Ազգային-հայրենասիրական թեման

¹¹ **Գրիգորյան Ա.,** *Գեղագիտությունը և քանաստեղծությունը Սարինյանի հետ*, էջ 120:

դարձավ առաջնային՝ բնութագրվելով նաև գաղափարախոսություն ձևավորող գործառնությով: Գրական այս գործընթացներում Սարինյանի գրաքննադատական գնահատումները երբեմն հատում էին տեղային/լոկալ բնութագրումների սահմանները և առանձին դեպքերում արցախյան գրականությունը դիտարկում համաշխարհային գրականության համապատկերում: Այսպես՝ «Հայտնության խորհուրդը կամ բանաստեղծության փիլիսոփայությունը» քննական վերլուծականում, անդրադառնալով Վարդան Հակոբյանի պոեզիային, ընդգծում է. «Եվ, այնուամենայնիվ, գնահատության չափանիշը հանգում էր մի որոշ սահմանի, հավանաբար ելակետ ունենալով տեղայնության հանգամանքը, այսինքն՝ արցախյան գործոնը: Տակավի՛ն չէր դիտարկվում, որ արցախյան պոեզիան կարող էր լինել ոչ միայն ազգային, այլև համաշխարհային»¹²:

Սարինյանի քննական հայացքը Վարդան Հակոբյանի պոեզիային տևական ընթացք ունեցավ՝ վերլուծականներով անդրադառնալով նրա «Թների հեռուն», «Քարի շնչառությունը», «Բանաստեղծությունը սահմանի վրա» ժողովածուներին, նրա պոետական դիմանկարը ուրվագծելով «Մեղեդիներից մինչև առասպել» բնութագրմամբ: Սարինյանն ընդգծում է ժամանակային անցման հենց այդ սահմանը՝ գրելով, թե. «Ինձ թվում է, որ դա բեկման կետ եղավ գրական քննադատության համար՝ Վարդան Հակոբյանին արդի հայոց բանաստեղծության էլիտայում տեսնելու առումով»¹³: Անդրադառնալով Հակոբյանի «Արցախ» ներբողին՝ Սարինյանն այն համարում է «ձայն հայրե-

¹² Նույն տեղում, էջ 173:

¹³ Նույն տեղում:

նականի վեհապանձ կանչ, ուր բանաստեղծը բարձր ներշնչանքով ներբողում է երկիր դրախտավայրի հավերժությունը»¹⁴:

Ես քեզ երգելու համար, իմ Արցախ, / Երբեք չեմ դիմում
խոսք ու բառերի,

Պարզապես բոբիկ, իմ ցուպը առած, / Այցելում եմ քո հին-
հին բերդերին,

Խոնարհվում եմ վեհ լեռներիդ առաջ, / Ձուլվում եմ հզոր,
անհաղթ երթերիդ,

Համբույրներ թողնում առյուծներ ծնող / Սուրբ մամիկների
մեռոն-փեշերին:

Անկոտրում ես դու, վշտի մեջ՝ մենակ, / Ինքդ քեզ՝ սա-
տար, ինքդ քեզ՝ հենակ¹⁵:

Կարևորելով վավերագրությունը

Արցախյան գրականության համապատկերում իր առանձնահատուկ տեղն ու դերն ունի գրող, հրապարակախոս, Արցախյան շարժման առաջամարտիկ Հրաչյա Բեգլարյանի գրական ժառանգությունը, որը չի վրիպել Սարինյանի գրաքննադատական հայացքից:

«Միայն նա կարող էր»¹⁶ հոդվածում Սերգեյ Սարինյանը, քննելով և բարձր գնահատելով Հրաչյա Բեգլարյանի «Արցախ--Նամե» հատորաշարը, գրում է. «Հրաչյա Բեգլարյանի «Արցախ--Նամեն» գրական մի հուշարձան է, որ ապագայի պատմաբաններին կներկայանա որպես հայրենագիտական անփոխարինելի

¹⁴ **Սարինյան Ս.**, «Հայտնության խորհուրդը կամ բանաստեղծության փիլիսոփայությունը», «Գրական թերթ», կայքէջ է ներբեռնվել 27/10/2016 թ.՝ <https://www.grakantert.am/archives/9799>

¹⁵ **Հակոբյան Վ.**, *Նշագրություն լուսնի վրա*, Երևան, «Անտարես» հրատ., 2016, էջ 137:

¹⁶ **Սարինյան Ս.**, *Հայոց գրականության երկու դարը*, գիրք հինգերորդ, էջ 245:

վավերագիր, իսկ նրա հեղինակը՝ մտավոր մշակույթի պատմության երևելի անունների շարքում»¹⁷:

«Արցախ-Նամեն» արժևորելով վավերագրական, աղբյուրագիտական, ազգագրական, բանահյուսական, գրական-գեղարվեստական տեսանկյուններից՝ Սարինյանը հատկապես կարևորում է այն որպես Հրաչյա Բեգլարյանի՝ շարժման ակտիվիստի, առաջամարտիկի, ականատեսի և իրադարձությունների անմիջական մասնակցի վկայություն:

«Հրաչյա Բեգլարյանի «Նամեն» աղբյուրագիտական արժեքավոր մատյան է՝ շարժման ակտիվ մասնակցի ու ականատեսի ստույգ գրառումներով, դիմումների, պետական որոշումների, ռազմական դիմակայության, թուրք-ազերական ագրեսիայի և կայսերապետական իմպերիայի դավադիր խարդավանքների փաստագրությամբ: Ապա տասնյակ ու հարյուրավոր դիմանկարներ՝ մարդիկ, որոնք պատմության հերոսներն են՝ ազատագրական պայքարի նահատակներ և Ղարաբաղի անկախ հանրապետության կերտողներ»¹⁸, -գրում է Սարինյանը:

Ժամանակը և անավարտ վիճակի հարցականը

Արցախյան գրականության ինքնատիպ ու եզակի էջերից են գրող, հրապարակախոս, Արցախյան շարժման առաջամարտիկ Մաքսիմ Հովհաննիսյանի ստեղծագործությունները: Սերգեյ Սարինյանը, ընթերցելով նրա «Արցախ իմ, ցավ իմ» գիրքը, իր գրականագիտական դիտարկումներն արտահայտել է «Նամակ գրող Մաքսիմ Հովհաննիսյանին» վերլուծության մեջ: «Ժամանակը, -խոսքն այսպես է սկսում ականավոր գրականագետը, - արցախյան ազատագրական շարժումն է տասնամյա տևողությամբ՝ սկիզբը, ընթացքը և անավարտ վիճակի հարցականը: Իրադարձությունները կասկածներ են հարուցում, ստու-

¹⁷ Նույն տեղում, էջ 248:

¹⁸ Նույն տեղում, էջ 246:

գում ճշմարտություններ, որոնք սնամեջ գաղափարների մշուշում համակերպում էին ազգային հասարակական մի մեծ ընդհանրություն»¹⁹:

Մաքսիմ Հովհաննիսյանը իր «Մղձավանջ» էսսեն սկսում է հարցադրումով, որը ցայսօր արդիական հնչեղություն ունի և բնութագրվում է համազգային օրախնդիր հարցի անավարտ վիճակի անորոշությամբ. «Ոչ մի բան պարզ չի: Երեկ ինչ որ պարզ էր, այսօր դարձել է անլուծելի խնդիր: Եթե քո ճանապարհը քեզ տանում է դժոխք, դեպի գեհեն՝ երազելի վիճակ է. դու գիտես, թե ուր ես գնում: Մենք ո՞ւր ենք գնում: Մեզ ո՞ւր են տանում: Տանողն ո՞վ է»²⁰:

Սարինյանի դիտարկմամբ այս հարցականներից է սկիզբ առնում առեղծվածը, մղձավանջը, մտքի մթագնումը, անդարձությունը: Հովհաննիսյանը արցախյան գրականությունը հարստացրեց իր ինքնատիպ ձեռագրով, թեմատիկ-ժանրային նորարարությամբ, հերոսներով, որոնք տոհմիկ կենցաղավարությամբ ձևավորում են իրենց միջավայրը՝ ինքնաստեղծելով իրենց տեսակը: Բարբառային բառուբանի կիրառման ոճական հնարանքին անդրադառնալով՝ Սարինյանը գրում է. «Ինչ գեղեցիկ ներդաշնակություն, որ հուզական գրավչություն է տալիս իմ լսողությանը վաղուց-վաղուց մոռացված բառերի արտասանությամբ՝ կյեվաթ, կումար, թացան, ցաք, թուշին, սրտահեռիչ, ճոնդ, խաղլացավ և այլն՝ հուշելով, որ կա Մուսքը՝ անհամեմատելին, և Աստված ստեղծել է Արցախը դրախտի համար»²¹:

¹⁹ Նույն տեղում, էջ 205:

²⁰ **Հովհաննիսյան Մ., Մենք**, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989, էջ 74:

²¹ **Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը**, գիրք հինգերորդ, էջ 207:

Եզրակացություններ

Պատմական հանգամանքների բերումով Արցախի գրականությունը սկզբնավորվել և յուրահատուկ զարգացման ուղի է անցել՝ աշխարհագրական, նաև հոգևոր-մշակութային առումով անջրպետված լինելով մայր Հայաստանից:

20-րդ դարի 60-ական թվականներից սկսած՝ Արցախյան գրականությունը հատկանշվել է ազգային ու պատմաքաղաքական իրադարձությունների հետ անմիջական, կենդանի կապով, ինչը այն դարձնում է յուրահատուկ և միաժամանակ կարևոր հայ գրականության ամբողջականության համար: Այն մշտապես համադրել է աշխարհայացքի ազգային-էթնիկական հիմունքը, ժողովրդական մտածողությունը, բանասիրությունը, պատմական հուշերը, հերոսական երգերը և արդի գրականությունն այնպես, որ կարողացել է փոխանցել Արցախի ժողովրդի յուրահատուկ ձայնը և մշակութային ժառանգությունը: Խորապես փոխվեց նրա դիմագիծը Շարժման և նրան հաջորդող տարիներին:

Արցախի գրականության առանձնահատկություններից մեկը դարձավ ժամանակի տարեգրությունը, որն արտահայտում է ժողովրդի ապրումները, ազգային ինքնությունը և աննկուն կամքը՝ պաշտպանելու իր տունն ու հայրենիքը: Պատմաքաղաքական դժվարությունները, ինչպես նաև արցախյան պատերազմները դարձան գրողների ստեղծագործությունների առանցքը՝ նրանց ներշնչելով նոր թեմաներ և գաղափարներ: Գրականությունը սկսեց գրել այն հույսը, կորուստը և վերապրումի ուժը, որոնք բնորոշ են պատերազմ տեսած և բարդ քաղաքական պայմաններում ապրող ժողովրդին: Մեծ է Սերգեյ Սարինյանի ավանդը Արցախի գրականությունը համակարգելու, զարգացման միտումը ուրվագծելու և գրական ընթացքը ուղղորդելու գործում:

Արցախի գրականությունը մշտապես պահելով իր գրաքննադատական մտքի տեսադաշտում՝ Սերգեյ Սարիսյանը հողավածներով, տարբեր վերլուծություններով քննել, մեկնաբանել, գնահատել և արժևորել է այն: Նրա գրականագիտական աշխատությունները, լինելով արդիական ու խորքային, ապագայում ևս կլինեն ուղենիշային՝ օգնելով ավելի հստակ պատկերացում կազմելու Արցախի գրականության ընթացքի և զարգացման վերաբերյալ: Այն մեծ նշանակություն ունի ընդհանուր հայ գրականության պատկերը ամբողջացնելու և գրական ընթացքը հասկանալու գործում:

ЗАРИНЕ САРАДЖЯН

*Кандидат филологических наук, доцент,
НАН РА, младший научный сотрудник
института литературы
имени М. Абегяна, ЕГУ*

КРИТИЧЕСКИЙ ВЗГЛЯД НА АРЦАХСКУЮ ЛИТЕРАТУРУ. ВКЛАД СЕРГЕЯ САРИНЯНА

Резюме

В силу исторических обстоятельств литература Арцаха зародилась и прошла уникальный путь развития, находясь в географической, а порой и духовно-культурной изоляции от матери-Армении.

Арцахская литература отличается своей непосредственной, живой связью с историческими событиями, что делает ее уникальной и в то же время важной для целостности армянской литературы.

Велик вклад Сергея Сариняна в систематизацию литературы Арцаха, выявление тенденций ее развития и руководство литературным процессом.

Всегда держа арцахскую литературу в поле своего критического мышления, Сергей Саринян исследовал, комментировал и оценивал ее посредством статей и различных анализов. Его литературные произведения, будучи современными и глубокими, будут и впредь оставаться знаковыми, помогая формировать более четкое представление о процессе развития арцахской литературы. Это имеет большое значение для формирования целостной картины армянской литературы и понимания процесса ее развития.

***Ключевые слова:** Арцах, Сергей Саринян, литература, армянский, поэзия, литературоведение, вклад.*

ZARINE SARAJYAN

*PhD, Associate Professor, NAS RA, Institute of Literature
after M. Abeghyan, Department of New Armenian Literature
YSU*

A CRITICAL LOOK AT ARTSAKH LITERATURE: THE CONTRIBUTION OF SERGEY SARINYAN

Abstract

Due to historical circumstances, Artsakh literature originated and has undergone a unique development path, being geographically, and sometimes also spiritually and culturally separated from mother Armenia.

Artsakh literature is distinguished by its direct, living connection with historical events, which makes it unique and at the same time important for the integrity of Armenian literature.

Sergey Sarinyan made a great contribution to the systematization of Artsakh literature, identifying the trends of its development and guiding the literary process.

Always keeping Artsakh literature in the field of his critical thinking, Sergey Sarinyan researched, commented and evaluated it through articles and various analyses.

His literary works, being modern and profound, will continue to remain iconic, helping to form a clearer idea of the process of development of Artsakh literature. This is of great importance for the formation of a holistic picture of Armenian literature and understanding the process of its development.

Keywords: *Artsakh, Sergey Sarinyan, literature, Armenian, poetry, literary studies, contribution.*